ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի նոյեմբերի 24-ից 27-ը
Բելգիայի Թագավորությունում (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ինգա Պողոսյան - Միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել), 2024թ. նոյեմբերի 24-ից 27-ը

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն ՀՄԿ շրջանակներում Կատարողականի արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակման (ԿԱԳՄՄ) աշխատանքային խմբի 2-րդ նիստին:

5. Քննարկված թեմաները՝

ԿԱԳՄՄ-ն առանցքային դեր ունի մաքսային իրազորությունների և իրավասությունների արդյունավետության գնահատման, ՀՄԿ հիմնական գործիքակազմի կիրառման գնահատման, ինչպես նաև ԿԱԳՄՄ-ն ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին համապատասխանեցնելու գործում:

Հանդիպման առաջին օրը ներկայացվեցին ՀՄԿ ԿԱԳՄՄ առաջին՝ ինքնագնահատման փուլի արդյունքները: Քննարկվեցին ՀՄԿ կողմից մշակված և որոշ անդամ պետությունների կողմից ներդրված արդյունավետության գնահատման ցուցանիշների (KPI) ներդրման և կիրառման առանձնահատկությունները: Անդամ պետությունները կիսվեցին ԿԱԳՄՄ կիրառման իրենց ազգային փորձով: Քննարկվեց ՀՄԿ ԿԱԳՄՄ թվային հարթակի ստեղծման, անդամ պետությունների կողմից

ակնկալվող աջակցության, ինչպես նաև տեղեկատվության՝ անդամ պետությունների հասանելիության վերաբերյալ հարցեր:

Հանդիպման երկրորդ օրը ՀՄԿ ԿԱԳՄՄ աշխատանքային խումբը ներկայացրեց ծրագրի շարունակականության, պահպանման վերաբերյալ հարցեր: Քննարկվեց ԿԱԳՄՄ կապը ՀՄԿ մյուս աշխատանքային մարմինների և դրանց շրջականներում իրականացված աշխատանքների հետ, կարևորվեց նաև միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի ներգրավվածությունը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՄԿ ԿԱԳՄՄ աշխատանքային խումբը ներկայացրեց ծրագրի առաջին փուլի հաշվետվությունը, ինպես նաև վերջինիս շրջանակներում իրականացրած վերլուծության մեթոդաբանությունը: Հանդիպման մասնակիցները ներկայացրեցին կատարողականի չափման ազգային պրակտիկան և խոսեցին ազգային մակարդակում ԿԱԳՄՄ կիրառման վաղ արդյունքների, առաջացող կարիքների բավարարման, գործնական իրագործելիության ապահովման և մաքսային մարմինների սպասումների գերազանցման ուղիների մասին:

ԿԱԳՄՄ աշխատանքային խումբը ներկայացրեց թվային հարթակի ստեղծման իրենց տեսլականը, որտեղ պետք է հավաքագրվեն բոլոր պետություններից ստացված արդյունավետության գնահատման ցուցանիշների (KPI) արդյունքները:

Քննարկվեցին և համաձայնեցվեցին ԿԱԳՄՄ արդյունավետ իրականացման, մաքսային իրավասությունների գնահատման հետագա քայլերը, դրանց կիրառման գնահատման հեռանկարները՝ ՀՄԿ հիմնական գործիքակազմի կիրառմամբ և կարողությունների զարգացման միտումների (կարիքների բացահայտում) համատեքստում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում ընդունվեցին ԿԱԳՄՄ ծրագրային թիմի հետագա աշխատանքները համակարգելու վերաբերյալ ընթացիկ փաստաթղթեր:

Հանդիպման օրակարգում ներառված էր ԿԱԳՄՄ նախագահի և տեղակալի ընտրության հարցը: Մասնակից պետությունների ձայների մեծամասնությամբ ԿԱԳՄՄ նախագահ ընտրվեց Կանադայի սահմանային ծառայության գործակալության ներկայացուցիչ Շոն Բորգը, իսկ փոխնախագահ՝ Ճապոնիայի մաքսային ծառայության ներկայացուցիչ Շինջի Օդան:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման ընթացքում կարևորվեց անդամ պետությունների հանձնառությունը՝ ակտիվորեն աջակցելու ԿԱԳՄՄ ներդրմանն ու իրականացմանը՝ նորարարական, ամբողջությամբ թվայնացված հարթակի միջոցով: Համաձայնություն ձեռք բերվեց ՀՄԿ այլ աշխատանքային խմբերի շրջանակներում ևս ակտիվ ներգրավվել և քննարկել ԿԱԳ մշակմանն ու ներդրմանն ուղղված աշխատանքներին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Ինգա Պողոսյան

02.12.2024թ.